Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի գործունեության ընթացքում առաջացած խնդիրների լուծմամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Նոր Կյուրին և Նոր Խարբերդ գյուղերում առկա են տրանսպորտային միջոցներ, որոնք դպրոցական երեխաներին տեղափոխում են դպրոց: Երեխաների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ավտոբուսները փոխարինել շատ նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով, ուստի շահագործման ծախսերը նույնպես ավելացել են: Ելնելով վրոգրյալից անհրաժեշտ է 2024թվականի բյուջեի վարչական մասում լրացուցիչ նախատեսել 770,0 հազար դրամ, որից Նոր Կյուրին բնակավայրի ավտոբուսի վարորդի համար պայմանագրային աշխատավարձը սահմանել 255,0 հազ" դրամ, Նոր Խարբերդ բնակավայրի ավտոբուսի վարորդի համար՝ 195,0 հազ" դրամ:

Հաշվի առնելով Մասիս համայնքի կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ Սուրեն Ամիրջանյանի զեկուցագիրը՝ Մասիս համայնքի բնակավայրերի առուների սեզոնային մաքրման /6 ամիս/ նպատակով լրացուցիչ 6 հաստիք տրամադրելու վերաբերյալ անհրաժեշտ է 2024թվականի բյուջեի վարչական մասում լրացուցիչ նախատեսել 9 000,0 հազար դրամ

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր	
				Ծախսեր				
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-9 770.0		
3	05	1	1	**Աղբահանում.** Սանիտարական մաքրում /առուների մաքրում	4213	9 000.0		
7	09	2	2	**Միջնակարգ կրթություն.** Աշխատավարձ	4111	770.0		
						0.0	***0.0***	
				Ընդամենը				

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ